# ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻԻ ՀՐԱՎԻՐԱԳԻՐԸ

## ՁԵՐԴ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ
## ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ՊԵՏ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ
## ՍԻՐԵՑԵԱԼ ԵՂԲԱՅՐ Ի ՏԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ

## ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱՎ

*Ռուսաց Պրավոսլավ Եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյակի կապակցությամբ, որը լրանում է այս տարի, Մոսկվայում սույն տարվա հուլիսին կայանալու են եկեղեցական հանդիսություններ, եվ դրա հետ միասին Պրավոսլավ Եկեղեցիների Պետերի ու Ավագների Խորհրդակցություն՝ կարեվոր համաեկեղեցական նշանակություն ունեցող մի քանի եկեղեցական խնդիրների շուրջը: Քննության են առնվելու հետեվյալ հարցերը — Վատիկանի ագրեսիայի մասին ընդդեմ Ուղղափառության, Անգլիքան ձեռնադրության (խիրոտոնիայի) վավերականության ճանաչման մասին, Էկումենիկական շարժմանը մասնակցելու մասին եվ ուրիշ հարցեր:*

*Մենք կցանկանայինք, որ մեր հանդիսություններին ու մեր Խորհրդակցությանը, որպես պատվավոր Հյուր, ներկա լինի եվ Ձերդ Վեհափառությունը:*

*Այս մասին անձամբ զեկուցելու համար ես Ձերդ Վեհափառության մոտ եմ ուղարկում Մոսկվայի Հոգեվոր Ճեմարանի Վերատեսուչ—Կազանի Արքեպիսկոպոս Գերմոգենին եվ այդ նույն Ճեմարանի Դոցենտ Դոկտուսովին, որոնք դրա հետ միասին Ձեզ կհաղորդեն եվ իմ տեսակետը մեր Եկեղեցիների միջեվ ավելի սերտ, եղբայրական հաղորդակցություն ունենալու ցանկալիության ու հնարավորության մասին:*

*Հուսով, որ մեր բարի ցանկություններն այս մասին կիրականանան, մնամ առ Ձերդ Վեհափառություն սիրով ի Քրիստոս*

Алексий Патриарх
Московский и всея Руси

*12 Մայիս 1948 Թ.*